Դեսպան Յամադան ներկա է գտնվել երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը

Դեկտեմբերի 7-ին դեսպան Յամադան այցելել է 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոն Սպիտակ՝ մասնակցելու երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը: Արարողությանը ներկա են եղել նաև վարչապետ Փաշինյանը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար պարոն Հարությունյանը և այլ պաշտոնատար անձինք, ովքեր ծաղիկնել են խոնարհել Սպիտակի երկրաշարժի և 2011թ.-ի Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարերին, ինչպես նաև Քըրք Քըրքորյանի (ամերիկահայ մեծահարուստ, ով հայտնի է «Լաս Վեգասի արքա» անունով, և ով մեծ աջակցություն է ցուցաբերել երկրաշարժից հետո) հուշարձանին, որի բացման արարողությունը տեղի է ունեցել նույն օրը:

Սպիտակի երկրաշարժի հուշահամալիր

Վարչապետ Փաշինյանը ծաղիկներ է խոնարհում Քըրք Քըրքորյանի հուշարձանին

Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքար

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ պրն. Բալյանի հետ

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ պրն. Բալյանի հետ Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարի մոտ

Սպիտակի քաղաքապետ պրն. Սահակյանը, գնդապետ Գաբրիելյանը (Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարի նախաձեռնող) և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ պրն. Բալյանը